



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյժարյան



«19» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 187 - 24

Նախաձեռնող՝

«Արարապ համայնքի կոմունալ ծառայություն»
բյուջեպային հիմնարկ
Արարապի մարզ, քաղաք Արարապ, Շահումյան փողոց, շենք 65

Գործունեությունը՝

Արարապ համայնքի կենտրոնացված կոշտ կենցաղային
թափոնների աղբավայրի (ԿԿԹԱ) շահագործման
Արարապի մարզ

Առդիր՝ 6 թերթ

Աղբահանությունն իրականացվելու է համայնքի բնակավայրերից, մասնավորապես՝ քաղաք Արարատից և ՈԿՖ Բանավանից, գյուղ Արարատից: Աղբավայրում նախատեսվում է իրականացնել օրական 9 տոննա (9030կգ) կենցաղային և սանիտարական մաքրման արդյունքում առաջացած թափոնների ընդունում և պահեստավորում (թաղման) համար: Նախատեսվում է ընդունել բնակչության կողմից սպառման գործընթացում բնակելի տարածքներում առաջացած, սանիտարական մաքրման արդյունքում առաջացած (համայնքի սանիտարական մաքրման ծառայության կողմից հավաքված և աղբավայր տեղափոխված), իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների:

Բնակավայրերում աղբը հավաքվելու է աղբարկղներում և ըստ կուտակման տեղափոխվելու է աղբավայր՝ առանց սահմանված ժամանակացույցի և կանոնակարգված տեսակավորման:

Նախատեսվող գործունեության տարածքի ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված:

Ներկայումս աղբավայրի համար հատկացված տարածքն անհարթ է, առանձին մասերում բլրանման հատվածների վրա մի քանի փոքր թփերով ծածկված տեղամասերով, ծառեր չկան: Տարածքը մասնակիորեն ծածկված է անկազմակերպ եղանակով բերված աղբով: Տարածքի որոշ մասերում առկա բերրի հողաշերտի հզորությունը տատանվում է 8 -20 սմ սահմաններում: Աղբով ծածկված տեղամասերում գործնականում բերրի հողաշերտ չի պահպանվել: Տեղանքում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

Աղբավայրի տարածքում առկա են պահակակետ, ջրի պահեստավորման բաքեր, կենցաղային շինություն, որտեղ կան սալիկապատ սանհանգույցներ, հանգստի և սննդի ընդունման սենյակներ, ինչպես նաև առանձին շինություն, որը նախկինում կառուցվել էր աղբի տեսակավորման համար:

Աղբավայրը նախատեսվում է շահագործել փուլ առ փուլ՝ նաև ռելիեֆային առանձահատկություններով պայմանավորված:

Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներն են.

- առաջին փուլում նախատեսվում է իրականացնել անկանոն ձևով տեղադրված աղբի հավաքում և տեղափոխում,
- աղբավայրի ցանկապատում մետաղական ցանցով,
- աղբի տեղափոխման համար աղբավայրում փորվելու են բջիջներ՝ 10 – 12 մ² մակերեսով և 2.5 մ խորությամբ,
- բջիջների հատակը նախատեսվում է կավապատել կամ տեղադրել գեոմեմբրանային ծածկեր:
- Հաշվի առնելով հողի կավի բարձր պարունակությունը՝ նախընտրելի է առաջին տարբերակը,
- պահանջվող 2.5 մետր բարձրության ապահովման և խտության ստուգման նպատակով նախատեսվում է տեղադրել չափման սյուներ (ռեպետներ),
- կառուցվելու են ստորգետնյա առվակներ/ավազաններ դեպի ցածրադիր վայրեր,
- բոլոր բջիջները միացվելու են նախատեսվող առվակներին/ավազանին, ստորգետնյա պլաստիկ խողովակներով,
- գտվածքը հավաքվելու է աղբավայրի ցածրադիր գոտում նախատեսվող առվակներում(ավազանում): Այստեղ նաև հավաքվելու են անձրևաջրերը,
- ավազանը նախատեսվում է կազմակերպել աղբավայրի ցածրադիր վայրում՝ օգտագործելով բնական իջվածքները: Ավազանի ծավալը նախատեսված է 100 – 120 մ³,



նախատեսվող ավազանում: Ավազանի հատակը լինելու է ջրամեկուսացված՝ բացառելու համար մզվածքի ներթափանցումը ստորերկրյա ավազան: Այստեղ նույնպես հավաքվելու են անձրևաջրերը: Ավազանի ջուրն օգտագործվելու է ջրցանի, ինչպես նաև ամռան ամիսներին աղբի որոշ տեսակների խոնավացման համար:

Աշխատակիցների խմելու համար ջուրը նախատեսվում է գնել 20լ բալոններով:

Արտահոսքերը հավաքվելու են աղբավայրում առկա հորում, որի պարունակությունը պարբերաբար տեղափոխվելու է Արարատ քաղաքի կոյուղու ցանց:

Նախնական հաշվարկների համաձայն թաղման պահից սկսած, որոշակի ժամանակի ընթացքում (տարի), մեկ տոննա աղբավայրի զանգվածից արձակված կենսագազի տեսակարար արտանետումը կկազմի 1.85 մ³/տ: Տարեկան աղբի մոտավոր քանակը կկազմի 5400 տ: Այստեղից կենսագազի տարեկան ծավալը կկազմի՝ 9990 մ³/տարի: Կենսագազի միջին տեսակարար կշիռը կազմելու է 1.2 կգ/մ³: Կենսագազի առավելագույն քայքայման քանակը տարում կկազմի՝ 12000 կգ կամ 12 տ/տարի:

Աղբավայրի փակումից առաջ նախատեսվում է՝

- որոշել գոյություն ունեցող ենթակառուցվածքի ապագա օգտագործման հարցը,
- փակման որոշում կայացնելուց հետո սահմանել աղբի ընդունման վերջաժամկետ,
- աղբի վերջին խմբաքանակն ընդունելուց հետո տեղադրել համապատասխան ցուցանակներ մեքենաների մուտքը արգելելու վերաբերյալ,
- ավարտել աղբավայրում կուտակված աղբի տեղադրումը բջիջների մեջ և ծածկել հողագրունտով,
- ապամոնտաժել և տարածքից դուրս բերել բոլոր ժամակավոր կառույցներն ու սարքավորումները, այդ թվում ժամանակավոր տնակը, ջրի պահեստավորման բաքը և այլն,
- տարածքը հարթեցնել և տարածքից դուրս բերել տեխնիկական միջոցները,
- կազմակերպել տարածքի կանաչապատում: Նախատեսվում է տնկել բարդի սև՝ 400 հատ, թեղի մանրատերև 650 հատ, կանաչապատման համար հատկացված տարածքի մնացած մասերում, հիմնականում թեք լանջերին կազմակերպել խոտածածկ:

Սկզբնական շրջանում ոռոգումը նախատեսվում է իրականացնել տարածքում առկա ավազանում կուտակված ջրով, հետագայում ջրցան մեքենաների միջոցով:

- Օրենքով սահմանված կարգով նախատեսվում է ձեռք բերել և աղբավայրի տարածք տեղափոխել բուսահող: Ըստ նախնական հաշվարկների բջիջների ընդհանուր տարածքը կկազմի 4.2 – 4.4 հա և նվազագույն բուսաշերտ ապահովելու համար կպահանջվի 7800 – 7900 մ³ բուսահող: Որպես այլընտրանքային լուծում հնարավոր է տարածքում օգտագործել կոմպոստավորված պարարտանյութ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նվազեցնել աղբավայրի տարածքում անձածկ թափոնների ազդեցության ենթարկվելու ժամանակահատվածը, մասնավորապես՝ օդի բարձր ջերմաստիճանով օրերին,
- թափոնները բեռնաթափել, տարածել և կոմպակտավորել հնարավորինս փոքր տարածքում,
- օգտագործել հոսքերի /ֆիլտրատների/ համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ,



- փոշու նվազեցման համար՝ հողածածկ մակերեսների վրա իրականացնել ջրցան, ներառյալ՝ հողի տեղափոխման աշխատանքների ընթացքում, մինչև մաքրումը և փորումը, հետլիցքը, կոմպակտացումը կամ աստիճանավորումը,
- թույլատրել միայն աղբատար մեքենաների մուտքը տարածք,
- ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ փրփրային միջոցներով, որոնցից չի առաջանում արտահոսք՝ մինչև տեղանքի լքումը,
- պարբերաբար ստուգել ֆիլտրատների հավաքման և մշակման կառույցները, պատշաճ շահագործման տեխնիկական պայմանների ապահովման նպատակով,
- բացառել աղբավայրի սահմանային մասերում հողային աշխատանքները և աղբի կուտակումները,
- մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման նպատակով կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ,
- մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտագությունն ապահովելու նպատակով,

Բնապահպանական միջոցառումների ծախսերը կկազմեն՝ 90.0 հազար դրամ/տարի:

Աղբավայրի շինարարության և շահագործման ընթացքում աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- թափոններից արտազատված հեղուկի (մզվածք) ծավալի մշտադիտարկում՝ շաբաթական մեկ անգամ,
- թափոններից արտազատված հեղուկի բաղադրության մշտադիտարկում՝ ամեն կիսամյակ,
- հնարավոր գազային արտանետումների մշտադիտարկում՝ ամեն կիսամյակ,
- հողի բաղադրություն մշտադիտարկում՝ ամեն կիսամյակ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Արարատի մարզի Արարատ քաղաքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի, մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Արարատի համայնքապետարանից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Աղբավայրում արգելել տեղադրել պայթուցիկ և դյուրավառ նյութեր, բնական հաստատություններից ու սպանդանոցներից առաջացած և այլ կենսաբանական թափոններ,



Էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոններ, սնդիկ պարունակող լամպեր և այլ արտադրանք, էլեկտրական կուտակիչներ և մարտկոցներ, փոխադրամիջոցների և դրանց անվադողերի, ինչպես նաև առանց հատուկ տարաների մեջ պահեստավորված հեղուկ թափոններ:

- Արգելել աղբավայրի տարածքում աղբի բաց եղանակով այրումը, աղբավայրում ձեռնարկել հակահրդեհային միջոցներ թափոնների ինքնաայրումը կանխելու նպատակով: Աղբավայրում հրդեհի բռնկման և հայտնաբերման դեպքում ապահովել ձայնային ազդանշանի միացումը:

-Տարվա չոր և շոգ եղանակներին իրականացնել աղբի խոնավացում:

-Շինարարության և շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԻՉ ՄԱՍ

«Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքի կենտրոնացված կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի (ԿԿԹԱ) շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Երիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջ. մասնագետ՝

Գոհար Մինասյան